

# ՄԷՋՄՈՒՄԷ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL  
MEDJMOUA-I-AHBAR  
Grand Rue de Péra, Taxim 65

Համբարձում իջի սեփա համար ՁԱՐՇԷՆՊԻՉ ՎԵ  
ՀԱՌԻՄԱ ԻՐԹԵՍԻ կրկնելու մեջը օրոհուր:

ՆԻԽԱՄԷՍԻ  
30 ԲԱՐՍ

مجمع اخبار  
لكا وعلى تقويم جادى ١٣٢٥

ԱՊՐԵԼԻ ՅԻՅԱԹԼԱՐԸ. = Իսթանպուլ իշին սենեկի 60 ղ. = 6 ալըղը 35. = Թաշար իշին սենեկի 85. = 6 Ալըղը 45 ղ. տըր: = Մէմարիքի էնեկի իշին սենեկի 20 ֆր. տըր: = Բաթա իւնեկի պիզէ ալիտ տըր: = 15 կիւնիւք նիւսիսի 60 րա. տըր: = Իււնիւթ ՇԱՐՇԷՆՊԻՉ. = Ինճի սահիֆէնի սըրաք 5, Յեճի վէ Յիւնիսի սահիֆէնի սըրաք 3, վէ 4 կիւնիսի սահիֆէնի սըրաք 1 ղ. տըր: = 20գ տէֆա տէրճ իսիւնեկ իշին սըրաք 1 ղ. տըր: = 20գ տէֆա տէրճ իսիւնեկ իշին սըրաք 1 ղ. տըր:

Հազէթայա միւթէպալիզ խոստում իշին ՅՈՒՂԱՆԵՍԻ թՈՒՄԵՍԻ տըրաճաթի տըր: = Թաթիլիսի՝ Պէյօղլուտա ճաթաթի քէպիտէ Ն. 65:

## Ս. ՅԱԿՈՐ

Աւանդութիւն է որ Ս. Յակոբի առնին օրը անպատճառ ձիւն տեղայ, որպէս զի կարենանք արդարացի կերպով գործածել այն միամիտ բացատրութիւնը թէ՛ «Սուրբ Յակոբ մօրուքը կ'երեւցնէ կոր» Սովորութիւն մը եղած է մեզի համար ձիւնը՝ Ս. Յակոբի օրով, և կարծես առանց ձիւնի Ս. Յակոբ մը՝ իր հրապոյրներէն մէկը կորսնցուցած պիտի ըլլար: Սակայն, այս փոքրիկ պատմութեան հակառակ ըլլալով՝ այսօր երբ այս տոյքը կը մրտնդոյն շարաթ օրուան համար, աշնանային օդ մը կ'ընէ դուրսը, երկինքը՝ իր ամբողջ կապտոյտ փառած է և արեւը ամառուինէ գոցուած տաքուկ շողեր կը փորձէ արձակել մեզմէ մարդկութեան վրայ: Ո՛չ ես, ո՛չ ալ օրացոյցս կրնանք սակայն վստահեցնել ձեզ թէ՛ այս աշնանային պաղ, ալ պայտառ օդը պիտի չարունակէ մինչեւ կիրակի առտու, եկեղեցատէր բարեպաշտներու համար սրբազան ու նուիրակաւ օրերէն մէկը, ուր պիտի կատարուի նաև Ս. Յակոբի հիւանդանոցին եկեղեցական հանդէսները և արարողութիւնները: Միայն բարեմալիքի է միշտ որ ձիւնը կարելի եղածին չափ թեթեւ ըլլայ, ո՛չ թէ միայն Ս. Յակոբի օրը, այլ ամբողջ ձմրան եղանակը, որով աղքատներուն համար եղած կ'ըլլայ մեծագոյն բարիքը և կարեւորագոյն նպաստէ: Ս. Յակոբ մենէ աւելի կը սիրէ աղքատները և երբէք չպիտի յօժարէր որ իր «հիւանդանոցի» ճերմակ մօրուքը ինչ մասին եղած տղայական միամիտ աւանդութիւնը տեղը երթալու համար, անպատճառ իր տոնախմբութեան օրը, բանաստեղծը իրաւունք ունենայ երգել. —

Յորձանքներով խօսական,  
Պրտոյններով խնկող ու մենդ,  
ձերմակ ձիւններ վար կուգան,  
Կարծես ունին յոյզ ու տենդ:  
Եւ բաւական պէս կակուղ,  
Բայց պաղ, շատ պաղ կը դիզուին,  
Իբրեւ անհուն կարագիւղ,  
Ճանեաց վրայ մեր գիւղին:  
Ձերմակ, ճերմակ, ճեպ ճերմակ,  
Երկինք, դաշտեր, մարգ ու լեռ,  
Փողոց, տուններ, հող նամակ,  
Նոյն իսկ ճերմակ են մարդեր:  
Բայց, ո՛հ, ո՛ւրիշ անդադրում,  
Կը տեղայ ձիւնն ըսպիտակ,  
Սառ ձմեռուան մէջ տըրտում,  
Երկին լայն, լայն ծովին տակ:  
... Կ'երբ, չա՛տ վերն, հո՛ն, հեռո՛ւն,  
Ուրութեանց մէջ անհունին,  
Ետեւն անդ ամպերուն,  
Ձուարթունք դըրախտ մը ունին:  
Պարսպացիկ հրեշտակաց,  
Թափած փետուրն երկնքէն,  
Ձերմակ, թեթեւ, հողմաւազ,  
Սառնորակ ձիւնն է. — կ'ըսեն...

Ձմեռը... Բայն մը, որ ինքնին կը

մեզնէ բոլոր անոնք, որոնք անուկ չունին, չեն կրնար վառելափայտ առնել, անձնին գինը կը սարսափեցնէ զիրենք, վերականգնող կը պակսին տունին մէջ և սենեակին կոտրած աղակերպէն հոլը իր մամիկի հին հէքեմաները կը մուլտայ:

Ու Ս. Յակոբը Հայրապետ կը սիրէր աղքատները, ա՜նա՛ թէ ինչու մեր հիւանդանոցին անուկը անոր յիշատակին նուիրուած է:

Ս. Յակոբ կը սիրէր աղքատները, արդ մեր Ս. Յակոբի հիւանդանոցն ալ կը սիրէր աղքատները՝ պատուարեղով միշտ դանդաղ անդրութիւնէ, թշուառութիւնէ, անձրեւէն ու փութէն, եւ վաղը երբ այս օգտաշատ հաստատութեան անուկը պիտի տօնուի, երախտապարտ բազմաթիւ սիրտեր պիտի բարախին անհուն հաճոյքով մը և անպատճառ երանութեամբ:

Հիւանդանոցի մը մեծագոյն կարեւորութիւնը ի վեր առնել աւելորդ պիտի ըլլար հոս, երբ անկեալ աշխարհի ամենէն օգտակար ու մարդասէր հաստատութիւններուն առաջին կարգը դրուած է արդէն: Եւ մեր Ս. Յակոբի հիւանդանոցն ալ չնորհիւ իր Հոգաբարձութեան անուկ ծառայութեանց և ջանքերուն, բարձր ընդունած է միշտ իր դիրքը, տակաւ աւելի մեծ փայլ մը ստանալով: Եթէ բաղդատելու ըլլանք Հիւանդանոցին քանի մը տասնեակ տարիներ առաջուան վիճակը այս օրուան վիճակին հետ, ակնհայտ պիտի տեսնենք այն մեծ յառաջդիմական փոփոխութիւնը, որ մտած է այդ հաստատութեան մէջ: Այսօր Ս. Յակոբի հիւանդանոցը հասած է այնպիսի նախաձեռնի բարգաւաճ վիճակի մը և օրէ օր աւելի մեծ բարգաւաճումը մը հասնելու ա՛յն պիտի յայտարար նշաններ ցոյց կուտայ որ, այս գոհացողիչ և ուրախատիլ տեսարանին առջեւ, ամէն Հայ-կաթողիկէ սիրտ հպարտութեամբ կ'ուռնի և կ'օրհնէ անունները բոլոր անոնց, որոնք գիշեր ցորեկ կ'աշխատին այդ հաստատութեան բարեւրումն համար: Անուրանալի է թէ մեր հիւանդանոցին այսօրուան բարգաւաճ վիճակը մեծագոյն կը պարտինք վերջին տարիներու հոգաբարձութեանց, որ ոչ մէկ ջանք ու զոհողութիւն ինչպէս են, իրենց ինկած պարտականութիւնը ի դուռն հանելու համար ամենայն յաջողութեամբ: Եւ կրնանք ըսել թէ իրենց ջանքերուն մէջ կատարելագոյն յաջողած են, քանի որ հիւանդանոցը՝ մասամբ իրենց ամբողջ թերիները ուղղելէ ետք, կը ձգտի աւելի մեծ կատարելագործումի մը:

Հիւանդանոցը՝ աղքատներու տունն է, հիւանդներու պատապարանը, տառապեալներու մխիթարիչը, և մեր ամենուս նուիրական պարտականութիւնն է անոր բարգաւաճումին օգնել և անոր յառաջդիմութեան ծառայել մեր կրցած եղանակով: Հոգաբարձութեան անդամները և մենամեծ զոհողութիւն մը յանձն առած են՝ ամենայն սիրով կատարելով իրենց ինկած ծառայութեանց բաժինը, եւ մենք ամենքս պատապարեալներու չափ և թե-

րեւս աճողով ալ աւելի, պէտք է անհունորէն երախտապարտ մնանք այդ գերազանցագոյն աշխու և մեծանոցի անձնաւորութեանց, որոնք իրենց ընտանեկան ու անձնաբան գործերուն մէջէն միշտ ու ժամանակ կը գտնեն զոհելու հիւանդանոցին ծառայութեան, որովհետեւ անկեալ համալսարանի տունն է: Արդ, մենք ալ բանանք մեր քաղաքները հիւանդանոցին պահանջներուն առջեւ և մեր նուիրականին մեղի ներածին զարկով՝ օգնենք այդ հաստատութեան, որպէս զի անկեալ աւելի չէնայ և աւելի պայծառանայ, և այս կերպով մեր աղքատները և մեր հիւանդներն ալ աւելի չէնան:

Տե՛սէ՛ք այն տաք ու ջերմ վերաբերումը, զոր մեր եղբայրակիցները ունին իրենց Ս. Փրկչի հիւանդանոցին մասին: Քիչ մը օրինակ առնենք անոնցմէ, և մեր պատկերներուն, մեր կնուներուն եւ մեռելներուն օրերը, չմոռնանք մեր լուծման ձգել հիւանդանոցի գանձանակին մէջ: Չմոռնանք աղքատները, որոնք տաքալու համար անուկ չունին, չմոռնանք այն թշուառագոյն կարօտեալները, որոնք չեն կրնար ձեռքներին կարկառել և ուրիշ ունեւորէ հայ և վառելիք կազ չունին, Ծնունդի, Կաղանդի օրով: չմոռնանք այն դժբաղդ հիւանդները, որոնք ոչ բժիշկի տալիք դրամ ունին, ոչ ալ դեղագործի տալիք ստակ: չմոռնանք այն խեղճ տղաքը, որոնք Կաղանդի օրով պատու պատառ զգեստներով կը պտըտին և հարուստ տղոց խաղալիքներուն կը նային աղիողորմ նայուածքներով: չմոռնանք ընտելեան կողմէ բոլոր ժառանգաւորեալները: չմոռնանք բոլոր անկեալները, դժբաղդները, տառապեալները, և բոլոր անոնք չմոռնալու համար, ամենէն առաջ եւ ամենէն ետք չմոռնանք մեր Հիւանդանոցը:

Եւ վստահ ըլլանք որ այն ամեն Աստուած ալ կ'օրհնէ մեզ, մեր զաւակները և բոլոր մերինները:

## ՄԵՆԲ ՄԵԶԻ

ԴԱՐՁԵԱԼ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ԵՐԴԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁԸ

Գոհունակութիւն կը պատճառէ մեզ թէ եւ ոչ կատարելագոյն և լիովին — այն պարագան զոր մեր նախորդ յօդուածին մէջ յիշատակած էինք անցողակի, վերահիւանդանոցներու համար նախապէս տըրուած աշխատութեան մը արդիւնքն: Մեր վերջին եկեղեցական երաժշտութեան նըկատմամբ գրած յօդուածները տարտամ ու խուլ արձագանք մը կուտան տակաւ առաջագանք մը նախապէս թեթեւ և գրեթէ անհասկալի թէ եւ, բայց հաւանական կ'երեւայ իւր յաջողութեան և ապահովութեան տեսակէտով:

Կիրակի օր Վիեննական Մխիթարեանց Անարատ Յղութիւն եկեղեցոյն մէջ Հայրապետական Ս. Պատարագի միջոցին, յիշեալ վանքին վարժարանի աշակերտաց

կողմանէ ընկերակցութեամբ վեր. Հայրենուն քառաձայն երգեցողութիւններ իղան:

Անաչառ ըլլալու համար պէ՛տք է խոստովանել թէ՛ սպասուած արդիւնքն բնաւ չունեցաւ, և ունեցողներուն վրայ ալ կերպով մը տարբեր տպաւորութիւն մը ներգործեց՝ քառաձայն երգեցողութեան մասին: Ինչպէս լսեցինք՝ ինչորոշ տաք ու զեւորութիւն մ'առնելուն հաջիւ երեք շաբաթ կար և այսքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ կատարելագործեալ երաժշտական խումբ մը կազմել, չըսենք կարելի էր կրնար ըլլալ, այլ նոյն իսկ անկարելի է: Միաձայն երգեցողութիւնը միշտ այսքան ժամանակի կը կարօտի, ուր մնաց մնացեալ երեք տարբեր երգեցողութիւններ, որոնք մէկ ձայն պիտի կազմեն միասին երգուած պահուն: Ասկից առաջ մենք փորձած էինք Ս. Պատարագի երգեցողութիւններն քառաձայն երգելու, որուն համար չորս ամիս աշխատել հարկ եղաւ թէ եւ, և դարձեալ մենք վստահ չէինք մեր յղութեան վրայ, վստահ չէինք որ առաջին անգամուան երգուած քառաձայն երգեցողութիւններն հեշտալուր տպաւորութիւն մը թողուին, և այս առաջին անգամէն կախում պիտի ունենար մեր յաղորդութեան էական պայմանն, որուն կը նըկարէինք, և որ մեզի համար սիրելի և բաղձալի էր միանալով:

Հետեւաբար նոյն կարճ ժամանակամիջոցին մէջ ձեռք բերուած արդիւնքն ինչեւնիս բան մը պիտի չկրնար ըլլալ, որուն քաջ գիտակից կրնային ըլլալ վեր. Հայրենիքը, և այս ափ յափոյ յախուռն գործունէութեան մ'աղբիւնքն եղաւ, այնպէս որ կատարեալ խղճի մտօք կրնանք ըսել թէ՛ Հայրապետական վեհալուք Ս. Պատարագն իւր բովանդակ ճշմութիւնն ու վեհութիւնը կորսնցուց կատարելագոյն:

Ամբողջ Պատարագի միջոցին երգուածներն գրեթէ խառնուրդ մ'եղան. երգուածներ կէս մը Արեւելեան, կէս մը Արեւմտեան էին, որոնց մէջ ընդհատաբար քանդակ երգուածներն ալ պակաս չէին: Այս պարագան շատ աննպաստ ազդեցութիւնն ըրաւ ունեցողներուն վրայ:

Քառաձայն երգուածներուն մէջ ամենէն աւելի ուշագրաւն էր «Գրիգորիոսի մէջ մեր»-ը որ կատարելագոյն յաջող ելք մ'ունեցաւ, ինչպէս նաեւ «Բարեխօսութեամբ»-ը: Բայց այսքան քիչ յաջող ու անթերի կազմերն, անյաջողութեան հետ անբաղդատելի ըլլալով, կրնանք ըսել թէ՛ ծայրէն ծայր անյաջող էր, և պէտք չէ սրտեղիկ երբ ըսուի թէ՛ սպասուած արդիւնքն չունեցաւ: Յաջողութեան համար պէտք էր աւելի հեռաւոր ժամանակի մը վերապահել քառաձայն երգեցողութիւնն, որ ինչպէս ըսինք վերը, իւր յաջողութիւնն նոյն իսկ առաջին անգամէն պէտք էր չլինէ:

Չմոռնանք ըսել թէ՛ առաջին տպաւորութիւնն ամենէն ազդեցիկն և տեսական կրնայ ըլլալ և այս առաջին անյաջողութեան դարձանք ընելու համար պէտք է աւելի լաւ կերպով պատրաստուել և գործն աւելի հաստատուն կայաններու վրայ դնել:



[illegible]







